

Թեան կու տայ իր նուազածութիւնը, խանդավառ ծափեր խլելով իւրաքանչիւր նուազի վերջաւորութեան:

Հանդէսը չփակուած, Վարժարանին տնօրէնը՝ Տաքթրը Թրէյսի բեմ բարձրանալով, ջերմօրէն կը շնորհաւորէ ջութակահարը — հայերէն լեզուով — եւ կը դուրսանէ անոր զեղարուեստական բարձր տաղանդը, եւ դառնալով ներկաներուն կը դռնէ:

— Հայե՛ր... հպարտացէ՛ք ձեր այս մեծ «վերթիւէօղ»ով:

Ափսո՛ս, սակայն, Դաւիթեանի այն միակ նուազածութիւնը Մարգուանի մէջ, իր կեանքին վերջինը պիտի ըլլար, որովհետեւ նոյն գիշերուան յաջորդ առտուն, քաղաքին մէջ շատ ցաւալի լուրի մը անմիջական տարածումը դառնօրէն կը խոցէ Մարգուանի հայութեան սիրտը:

ԴԱՎԻԹԵԱՆ ՅԱՆԿԱՐԾԱՄԱՀ...

Վաղահաս մահուան այս բօթը շուտով արձագանդ կը դնէ նաեւ Սամսոնի, Տրապիզոնի, Պոլսոյ, Իզմիրի եւ արտասահմանի, մասնաւորաբար Կովկասի մէջ, ուր անձկանօք կը սպասուէր անոր փառահեղ վերադարձը իր կատարած չրջատոյտէն:

Հայկական թերթերն ի մասնաւորի, առաջին էջերու վրայ ողբացեալին լուսանկարին առնթեր, կը ներբողէին անոր արտակարգ տաղանդը եւ կը սգային հայ արժէքի մը այս դառն կորուստը:

Պորհրդաւոր նկատուած հանդիպում մըն էր հէզ ջութակահարին նուազած վերջին եղանակը: Իր ամենագնահատած տաղանդաւոր հեղինակներէն, իտալացի «վերթիւէօղ» փականիների, «սօլ» ձայնի միակ լարին վրայ Մովսէսի աղօթքը:

Տարաբախտ երիտասարդին անհնչացած մարմինը կը դնեն իր իջեւանած պանդոկի սենեակի անկողինին մէջ, տակաւին նոր մահացած:

«Գոյէ՛ձ»ին ամերիկացի բժիշկը՝ Տաքթրը Մարթինը զմոտեյէ յետոյ անոր մարմինը, դայն կը դնեն դադաղի մը մէջ, որուն կափարիչին գլուխի կողմը ապա-

կեայ լուսամտով էր ծածկուած, որպէսզի փափաքողներ կարենային տեսնել դժբախտ արուեստագէտին լայն ճակատով հերարձակ գլուխն ու համակրելի դէմքը:

Թիֆլիսէն՝ իր ընտանեկան պարագաներուն կողմէ եկած հեռագրական խնդրանքի մը համեմատ, դադաղը կը փոխադրուի Սամսոն, ուր Հայ-կաթողիկէ եկեղեցւոյ մէջ, երկու օր, մահարեմի մը վրայ կը ցուցադրուի ժողովուրդին, ու յետ եկեղեցական հանդիսաւոր արարողութեան, որ կը կատարուի երգհօնի, ջութակներու եւ սրինգի նուազածութեամբ, երկնեայ ծաղկէպսակներով ծածկուած ու չրջատուած դադաղը, վեց կտրիճ երիտասարդներու կողմէ ուսամբարձ, հայ եւ օտարազգի յուզարկաւորներու հսկայ թափօրի մը հետեւողութեամբ եւ հայկական երկու քոյր եկեղեցիներու զպիրներու դաշն երգեցողութեամբ, երբ Հայոց Թաղի գլխաւոր փողոցներէն կ'անցնէին, Հայ Առաքելական եկեղեցւոյ Առաջնորդարանին առջեւ կանգ կ'առնուի, ուր՝ այն ատենուան ժողովրդապետ Տէր Սահակ Վարդապետ Օտապաչեան* մօտենալով ննջեցեալին դադաղին՝ կը խօսի շատ յուզիչ դամբանական մը, ողբալով հայութեան այս վաղահաս անդին կորուստը, մինչ միւս կողմէ կը լսուէին թաղին երկու եկեղեցիներուն զանգակներուն տխրազգեցիկ զօղանջները:

Այս դադարէն յետոյ, թափօրը շարունակելով իր զանգաղաքայլ գնացքը, կը հասնի վերջին հանգրուանը՝ Հայ-կաթողիկէ եկեղեցւոյ եւ Առաջնորդարանին միջեւ գտնուող բակը, ուր կը կատարուի թաղումը մասնաւորապէս պատրաստուած կրաղիւսածեփ դամբանի մը մէջ, նախօրը:

* Այն օրէն մէկուկէս տարի չանցած, 1915ին, այն պատուական եկեղեցականը Ապրիլեան մեծ եղեռնի առաջին նահատակներէն մէկը պիտի ըլլար, Սերատալոյ մօտերը:

տարին վախճանեալ Տրապիզոն-Սամսոն թեմերուն հովուապետ բարեյիշատակ Արիկեան եպիսկոպոսի զերեզմանին կից:

Հուսկ, ներկայ զպիրներէն երիտասարդի մը քաղցրածայն յուզումնալի մեներգով մը վերջ կը դնէ այն անմոռանալի տխուր յուզարկաւորութիւնը, որ առած էր համազգային ընդթ:

Ահա այսպէս անցաւ, երազի մը նման, մեծ երաժշտագէտին կեանքը: Շիջաւ արեւը երեսուներեքամեայ կենսունակ տարիքին, որը թողլով, իր կեանքի անբաժան ընկեր, երկու բիւրեղաձայն ջութակները: անէացան իր փայփայած փայլուն յոյսերը ապագայի նորանոր ստեղծադրութեանց:

Այս յուզարկաւորութենէն հաղիւ երկու շարաթ անցած, Թիֆլիսէն Սամսոն եկան ողբացեալին սգաւոր քոյրը՝ Մարիանէ եւ

զարմիկը՝ Ստեփան Գլուքեան, այցելելու իրենց տարաբախտ հարազատի զերեզմանը, որուն առջեւ, խեղճ քոյրիկը, հոգեյոյզ եւ արտասուածքով կը ծնրադրէ, ծաղկէփունջ մը կը դնէ վրան ու կ'աղօթէ: Սրտածմլիկ էր այս պատկերը, որ մտքիս մէջ քանդակուած պիտի մնայ, որքան ատեն որ ապրիմ:

Եւ ափսո՛ս, մէկուկէս տարի ետքը Սամսոնի հայութեան գլխուն եւս պայթելով տարազրութեան դժոխային չարաչառներու եւ ջարդի ահաւոր աղէտը, հոն՝ Սամսոնի մէջ պիտի մնար Դաւիթեանի զերեզմանը անշուք, առանց իրականանալու տեղւոյն հայ երիտասարդութեան զովքի ձեռնարկը, կանգնելու հանգուցեային հողակոյտին վրայ փառաւոր շիրիմ մը:

ՕԹՈՆ Յ. ՀԵՔԻՄԵԱՆ

ՀԱՅՐԵՆԻ ՆԵՐՇՆՁՈՒՄՆԵՐ

Գրեց Հ. ՎԱՀԱՆ ՅՈՎՀԱՆՆԵՍԵԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆ

Դուն փոքրիկ ես սրտի չափ,
Մանուկ սրտի բարախուն.
Բայց պատմութիւնդ է անափ
Ալիքներով առլըցուն:

Դուն փոքրիկ ես վարդի չափ,
Վայրի վարդի պէս ցնծուն.
Ծիածանով ոսկեկապ
Գեղեցիկութեան հարսն ես դուն:

Դուն փոքրիկ ես, Հայաստան,
Թիթեռնիկի պէս ոսկի.
Ամէն բացուող նոր դարնան
Ակը վերան մատանի:

Դուն փոքրիկ ես, Հայաստան,
Հայ սրտերուն թարմ ածու.
Սէր կը ցանեն ու կ'ըղձան
Սուրբ քարի տակ ննջելու:

Յ. ԹՈՒՄԱՆԵԱՆԻ ՇԻՐՄԻՆ ԱՌՋԵՒ

Շիրմիկ վըրան ես վարդեր ցանեմ
Փոխան փուշերու, ո՞վ հէզ Թումանեան.
Դուն զըւարթ էիր արեգակին դէմ,
Ու տըւին քեզի լքուած զերեզման:

Եւ հազար սրտեր շինեցիր երգով,
Հազար պարտէզներ բացիր բերկրանքի.
Մինակ ես հիմա տրտում երազով,
Ծաղիկ եւ հաճոյք չեն բերեր քեզի:

Կարօտ ես, գիտեմ, Սարոյի ձայնին,
Բարձրը սարերուն, Անոյչի դէմքին.
Մինչ հոս կը շրջի ողբաձայն քամին,
Ծաղիկ եւ հաճոյք չի բերեր քեզի:

Այստեղ, ըսին, կար աշխարհ մ'հայկական,
Մեռելներ՝ զրկած զիրար սիրալի.
Դուն էիր անոնց ուրախ թամազան,
Ձեռքիդ մէջ բաժակ եւ անոյշ դինի:

Եւ հոս էր, ըսին, Խոջավանքն Հայոց,
Մեռելներու հետ կանգնած աղօթքի.
Արդ ո՞վ պիտ' ըսէ աղօթքի խորոց.
Ո՞վ պիտի վառէ լոյս Լուսաւորչի:

Կու գայ արեգակ, աստղերը կու գան
Անշուք դամբանիդ վըրան արցունքի.
Մոռցան քեզ մարդիկ, երգերըդ մոռցան,
Ծաղիկ եւ հաճոյք չեն բերեր քեզի:

Այս փըլատակուած որմերու շուքին
Ի՞նչպէս երազես քնար ու գինի,
Ո՞ւր են վերնատանդ հիւրեր սիրելի,
Ծաղիկ եւ հաճոյք բերելու քեզի:

Երբ կը բանայիր դռներդ լոյսին
Քաղցր հիւրեր էին Հայն ու Վըրացին.
Ինչո՞ւ Վըրաստան մերժեց իր հոգին,
Ոչ շիրմիկ վըրան կախեց իր արփին:

Յանեմ լիարուռն, ես վարդեր ցանեմ,
Դընեմ խունիկ տեղ երգերդ մի առ մի.
Սիրտ առ սիրտ խօսիմ, Անոյչը կանչեմ,
Գէթ փունջ մը ծաղիկ բերելու քեզի:

Թիֆլիս, 13 Սեպտ. 1960

ԵՐԵՒԱՆԻ ՊԱՐՏԷԶՆԵՐԸ

Երեւանի պարտէզներէն
Սէր քաղեցի երազով.
Հաւք ըլլայի, գայի նորէն,
Բոյն դընելու վարդին քով:

Ու ցանէի սրտիս վըրան
Ոսկի փոշին նարկիսի.
Լըսէի հեշտ Սայեաթ-Նովան,
Արցունք տալով արցունքի:

Կարծես Գողթնի քնար ըլլան
Խօսքեր անոյշ զոյգերու.
Ոտքերուն տակ վարդ ու շուշան,
Սիրոյ ճամբան երթալու:

Իր ածուներն ինձ կը թըւին
Սրտի վըրայ բացուած վէրք.
Իմ հոգիիս սիրով զարկին
Կարօտի մէջ բացուած վէրք:

Երբ ծառէ ծառ խարչափ կ'անցնի,
Կու գան վարդերն իրար քով.
Ու կը ժպտին ինձ ու քեզի,
Երեւանի աչքերով:

Արփին աչքեր կը համբուրէ,
Արփին ոսկի կը տեղայ.
Կարծես թէ հին հարսանիք է,
Երբ Արտաշէսն էր արքայ:

Ո՞րքան անոյշ համբուրէ կ'ըլլայ
Սոխակին հետ սրտի ձայնն.
Այնտեղ ամէն օր ման կու գայ
Ձեռքին տալիդ հայ զուսանն:

Ու կապոյտէն ցօղի նըման
Երգ կը հոսի, կ'իջնէ սէր.
Թեւեր՝ փափուկ թեւի կու գան
Ուրախութիւնն ու պարեր:

Կարծես չունի տրտում զիշեր,
Ոչ խաւարի ծանրը բեռ.
Առանց աստղի չըկայ զիշեր,
Առանց սիրոյ՝ ուղիներ:

Շիրազն անշուշտ պիտ' երազէր
Շամիրամի բուրաստանն,
Բայց իր սրտին պիտի ըսէր.
— Ուրիշ է մեր Երեւանն: —

Երեւան, 14 Սեպտ. 1960

Գ. Ա. Յ. Ի. Ա. Ն. Է.

Հին սօսիներուն շուքին տակ բեկբեկ
Աղօթքի մէջ քեզ տեսայ ծնրադիր.
Ձեռքիդ մէջ սեղմած հընամաշ Նարեկ,
Երկինքներէն լոյս ողբով կ'ըզձայիր:

Գմբէթիդ ներքեւ կոյս մը կար խոնարհ,
Գլխուն սրբութիւնն ոսկեթել լաշակ,
Բուրվառի նման սիրտը կը մըխար.
Սուրբ Գայիանէն էր, կ'աղօթէր մենակ:

Ուղեցի հնչել վաղեմի կոչնակն
Երկնի հրեշտակներն ամբողջ կանչելու.
Իր մօտ ծնրադիր, ինքը տապանակ,
Շընորհքի առուն դէպ' ինձ դարձնելու:

Եւ եկեղեցին կարծես վերացաւ,
Երկինքը լեցուց դաշտերն ամայի.
Հողիէս խորունկ հառաչ մը թըռաւ,
Ձերդ ըստիւններէ ճերմակ աղանի:

Յանկարծ ինձ ըսաւ սրբուհին մեղմիկ.
— Քեզ կը սպասէի, կարօտ ուխտաւոր,
«Անձիմֆ»ներէն ինձ տողեր դեղեցիկ
Անդամ մ'ալ կրկնէ, սրտիս վերաւոր:

Եւ որմերը խումբ, եւ սիւները փող,
Կազմեցին համերգ հին օրերու պէս.
Հայութիւնն ամբողջ խոնարհ աղօթող,
Վառեց իր սիրոյ ջահերը կարծես:

Տեսիլ թէ երազ, չեմ դիտեր երբեք,
Հողիս թեւ առաւ գմբէթէ գմբէթ.
Շողի փոխուեցան վանկերը մէկ մէկ,
Աչքերուս դրբի հրեշտակներուն հետ:

Երբ արփին ըսաւ. — Ա'լ ուշ է, երթանք —
Աչքէս չող առի, դրբի խորանին.
Թող կանթեղ ըլլայ ու մէջն աղբրսանք,
Հայաստանի կոյս սուրբ Գայիանէն:

Էջմիածին, 22 Սեպտ. 1960

• Գ. Ր. Ա. Թ. Օ. Ս. Ա. Կ. Ա. Ն. •

ՀԱՅ ԳՐԻ ԵՒ ԳՐԶՈՒԹԵԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ
ԹԻԻՆ: Գրեց՝ Ա. Գ. Արրահամեան: —
Լաքակազմ, ուքաձալ, էջ 416, գու-
նաւոր եւ անգոյն նկարներ: Երեւան,
1959: Գիւն 11 ռուբլի 15 կոպէկ:

Հայկական հնագրութեան մասին առա-
ջին եւ ամէնէն արժէքաւոր գործերէն
վերջ, որ մեզի տուած էր բազմալատակ
ողբ. Հ. Յակոբոս Վ. Տաշեան՝ Վիեն-
նական Միութեանը, մինչեւ այսօր չու-
նէինք այս խիստ կարեւոր նիւթին մասին
լուրջ եւ համապարփակ աշխատութիւն
մը, որ ճոխացած ըլլար բոլոր այն պա-
կաներով որոնք կը գտնուէին Հ. Տաշեա-
նի գործին մէջ, եւ նիւթը մեր օրերուն
բերուած ըլլար Հ. Տաշեանի գործին հրա-
տարակութենէն ի վեր նորադիւտ եւ վե-
րամշակուած տուեալներով: Ահա այս կա-
րեւոր բացը կը գոցէ Աշոտ Արրահամեան
իր այս նոր ու մեծապէս զնահատելի եւ
աշխատուած գործով: Ան ձեռնհասօրէն
ձեռք կ'առնէ ուսումնասիրութիւնը հայ
գրի եւ գրչութեան պատմութեան, եւ
բազմաթիւ մասնաբաժանումներով՝ նոյն-
իսկ ոչ մասնագէտ ընթերցողին մատչելի
կ'ընէ նիւթը:

Մեծապէս զնահատելի եւ աշխատուած
կը գտնեմ իր գործը, որ ինք «Նուիրում
եմ, կ'ըսէ, հայ գրի եւ գրչութեան բազ-
մալատակ ստեղծողը՝ Մեսրոպ Մաշտո-
ցի ծննդեան 1600-ամեակին»: Ինքս պի-
տի ըսէի «Մեսրոպեան հայ գրի եւ գրչու-
թեան բազմալատակ ստեղծողին», քանի
որ կարելի չէ որ նախամեսրոպեան գիր
եւ գրչութիւն ունեցած չըլլար մշակու-
թասէր եւ բարձրորակ քաղաքակրթեալ
հին հայութիւնը:

Ներածութեան մէջ, որ սկիզբի 16 էջերը
կը գրաւէ, հեղինակը համառօտ կերպով
կը թուէ գոյութիւն ունեցող հայ ձեռա-
գիրներու քանակը, վայրը եւ այլն, ինչ-
պէս նաեւ իր գործէն առաջ հրատարակ-
ուած հայ գրի, գրչութեան, հնագրու-
թեան եւ այլնի մասին քիչ շատ աչքի
զարնող կարեւոր գործերը, կը յիշէ հին
հեղինակութիւններ ալ մեր ձեռագրական
հարստութենէն քաղհան ընելով:

Ներածութենէն անմիջապէս վերջ կը
տրուի գունատիպ հայ գրչագիրի մը կա-
շապատ կազմը, հիւսկէնկար տաղումնե-

րով, որ սակայն ընտրեալօրն նմոյշ մը
չէ ըստ իս մեծապէս զարգացած հայ հին
կազմարարութեան սքանչելի արուեստին
ու արհեստին:

Առաջին գլուխով Արրահամեան մեզի կու
տայ «Հայաստանում այլ նշանագրերով եւ
լեզուներով գրուած գրութիւնները»: Հոս
կը խօսի «էծապատկեր» (այծաձեւ երկ-
եղջիւր պատկերագրութիւն), ինչպէս նաեւ
անհիմն կերպով «մեհենական» կոչուած
գրաձեւերու մասին: Այս վերջինները իբր
թէ գործածուած ըլլան հայկական մեհ-
եաններու մէջ. տեսութիւն մը որ բոլոր-
ովին մտացածին է, ինչպէս որ Արրա-
համեան ինքն իսկ կասկածելի ըլլալը
կ'ընդունի: Արրահամեան՝ ասոնց կարգին
պէտք էր յիշեր նաեւ «սեռագրութիւն»,
որոնց գոյութիւնը հազիւ նշմարելի է Ա-
րրահամեանի ժայռերէններուն ոմանց վրայ եւ
որոնք անուրանալի կերպով բազմադա-
րեան հնութեամբ գրութեան ձեւեր են:
Գալով հիթիթերէն պատկերագրութեան,
Արրահամեան զանոնք Հայաստանի մէջ
գործածուած հին նշանագրերու շարքին
կը դասէ, սակայն մեզի չի տար Հայաս-
տան գտնուած օրինակ մը, եւ ինձի ան-
ծանօթ կը մնայ պատմական Հայաստանի
սահմաններուն մէջ անոնցմէ գտնուած
ըլլալուն օրեւէ նմոյշ: Հետզհետէ կու
տայ Ուրարտական, Արամեական, Յու-
նական, Լատինական գրաձեւերով յիշա-
տակարաններու գոյութեան մասին ապա-
ցոյցներ Հայաստանի մէջ:

Աւելի կարեւոր եւ շահեկան է յաջորդ
գլուխը, «Հնագոյն տուեալներ նախա-
մեսրոպեան հայ գրի եւ գրականութեան
մասին»: Այս նիւթը, որ մեզմէ շատերը
լուրջ կերպով զբաղեցուցած է ու կը զբա-
ղեցնէ, դեռ կարելի չէ եղած վերջնական
եզրակացութեան մը հասցնել: Ըստ իս
խոշորագոյն պակաս մը կայ, եւ այդ ալ
այն է, որ Հայաստանի մէջ պեղումները
հասած չեն այն չափերուն՝ քանակի եւ
որակի՝ որով մենք կարենայինք վերջնա-
կան կերպով բան մը ըսել: Արրահամեանի
հետ համաձայն եմ նախամեսրոպեան հայ
գրի եւ գրականութեան գոյութեան մա-
սին. հեղինակը համաձայն չէ որ «բա-
նաւոր գրականութիւն» գոյութիւն ունե-
ցած ըլլայ. եւ կ'ըսէ. «Այս տեսակէտի
հետ չի կարելի համաձայնել, որովհետեւ
այն, ինչ գրի չէ առնուած, դեռեւս գրա-
կանութիւն չէ, այլ բանահիւստութիւն»
(էջ 35): Եթէ բանահիւստութիւնը, որուն
կ'ակնարկէ յարգելի հեղինակը, օրինակ,